<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Հ.ԲԻՇԱՐՅԱՆ
13 հոկտեմբերի 2021 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Լուսինե Սիմոնի Մինասյանի՝ «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական-իրավական վերլուծություն» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք -սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2021 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 2):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ իգթ., դոցենտ Ն.Տոնոյանը, ամբիոնի դասախոսներ՝ իգդ., դոցենտ Ն. Սուքիասյանը, իգթ., դոցենտ Ա. Փխրիկյանը, իգթ., դոցենտ Մ.Մուրադյանը, իգթ. Դ.Սարգսյանը, իգթ. Վ.Պողոսյանը, իգթ. Ա.Թադևոսյանը, իգթ., դոցենտ Լ.Տոնոյանը, իգթ. Կ.Հակոբյանը, Լ.Զիրոյանը, Ա.Բիշարյանը, Ա.Նահապետյանը, Շ. Թադևոսյանը,Լ. Կարապետյանը, Ա.Մուշեղյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Լուսինե Մինասյանի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնախնդիրների հետազոտությանը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության 2015 թվականի

փոփոխություններով Սահմանադրության նոր կարգավորումների համատեքստում մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրականացման և այդ պաշտպանության սահմանադրական երաշխիքների ապահովման ոլորտում առկա հիմնախնդիրների հետազոտության անհրաժեշտությամբ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք: Աշխատանքի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ որոշակիորեն հիմնավորված եզրահանգումներով ներկայացվում են մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրականացման ու պաշտպանության սահմանադրական ինստիտուտի որոշ հիմնահարցերի գործնական լուծումներ: : Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումները հատկապես սահմանադրական նոր կարգավորումների և միջազգային իրավական երաշխիքների համալիր ուսումնասիրության շրջանակում ունեն ճանաչողական զգալի նշանակություն և կարող են օգտակար լինել առանձին հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

Աշխատանքի շրջանակներում հեղինակը համալիր կերպով կարևոր տեղ է հատկացրել Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի գիտագործնական հիմնախնդիրների բացահայտմանը ու բովանդակության հստակեցմանը՝ սահմանադրական իրավունքի տեսության ու պրակտիկայի զարգացման համատեքստում:

Բացի այդ՝ ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել անձնական տվյալների պաշտպանության և անձնական տիրույթի իրավունքների՝ գիտական ուսումնասիրությունների և համեմատական-իրավական վերլուծության անհրաժեշտությանը, այդ թվում՝ արտասահմանյան փորձի և միջազգային կազմակերպությունների պրակտիկայի համատեքստում:

Քննարկվող աշխատանքի նպատակն է՝ մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման պատմության, միջազգային փորձի, դրա իրացման արդի հիմնախնդիրների, զարգացման միտումների և առաջիկա հեռանկարների համալիր համեմատական ուսումնասիրությունը, անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման համար կարևոր տեսությունների մշակումն ու հիմնավորումը, ինչպես նաև՝ մարդուն և

քաղաքացուն գործնականում իրացնել իրենց անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական երաշխիքների բացահայտումը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտության հետևյալ գիտական *խնդիրները՝*

ա) ուսումնասիրել անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրավական հիմքի ձևավորման ու զարգացման պատմական նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում,

բ) իրականացնել անձնական տվյալների պաշտպանության եվրոպական և ամերիկյան մոդելների համեմատական իրավական հետազոտություն և վերլուծություն,

գ) բացահայտել «անձնական տվյալ» հասկացության բովանդակությունը և տարբերությունները «անձնական տեղեկատվություն» իրավական կատեգորիայից,

դ) առաջադրել «անձնական տվյալ» հասկացության արդիական և կիրառելի սահմանում, որը կարտահայտի ոչ միայն այդ երևույթի ժամանակակից ընկալումները, այլև համահունչ կլինի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

ե) հետազոտել «անձնական տիրույթի իրավունքի» և «անձնական տվյալների պաշտպանության իրավունքի»՝ որպես երկու նոր սահմանադրական ինստիտուտների հարաբերակցությունը և այլն:

Հետազոտության գիտական նորույթը

Գրախոսվող հետազոտության գիտական նորույթն արտահայտված է աշխատանքի եզրահանգումներում, տեսական հետևություններում և աշխատանքում առկա գործնական առաջարկություններում:

Քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման ոլորտում մշակվել են նոր գիտական առաջարկություններ և դիտարկումներ, որոնք

վրա, ինչպես նաև ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության կատարելագործմանը:

Աշխատանքը գրված է բարձր լեզվաոճական եղանակով և իրավաբանական եզրութաբանության պահանջներին համապատասխան:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Աշխատանքում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականություն, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և գործական առաջարկությունները ներկայանում են գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 1-ին կետի դրույթում հեղինակը որպես նորույթ դիտարկում է այն, որ՝ Հայաստանի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի համակարգը հանդիսանում է եվրոպական մոդելի դրսևորում (էջ 12, 35, 38-39): Կարծում ենք, որ ասվածն անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական բնույթի բացահայտման համար այնքան էլ առաջնային չէ և այդ կապակցությամբ հեղինակի կողմից լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն, թե ինչով է պայմանավորված դրա գիտականության նոր տարրի նշանակությունը:

2. Պաշտպանության ներկայացվող 2-րդ կետի դրույթում սահմանվել է «Անձնական տիրույթի իրավունք» (right to privacy) եզրույթը, որն, ըստ հեղինակի, ընկալվում է՝ որպես անձին հանգիստ թողնելու իրավունք, վերացական և առարկայական տարածք, որն իր մեջ ներառում է տարածքային, սեփական մարմնի, բնավորության, զգացմունքների և արժանապատվության, ընտանեկան կյանքի, ներքին համոզմունքների, տեղեկատվական անձնական տիրույթ ունենալու և մենակ մնալու յուրաքանչյուրի իրավունքը (էջ 12-13, 39-55):

Աշխատանքի 2-րդ հավելվածում առաջարկվել է նաև այս հասկացությանը տալ օրենսդրական ամրագրում: Կարծում ենք, որ նման առաջարկը հավելյալ հիմնավորման անհրաժեշտություն ունի, քանի որ Սահմանադրությունում

բացակայում է անձնական տիրույթի իրավունքի՝ որպես առանձնացված իրավունքի պաշտպանությունը և փոխարենը Սահմանադրության 31-րդ և 34-րդ հոդվածներով ամրագրում են ստացել միայն մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները:

3. Պաշտպանության ներկայացվող 5-րդ կետի շրջանակում հեղինակը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգը՝ առանձին հավելվածով առանձնացրել է թվով 38 նորմատիվ իրավական ակտեր, որոնցում առաջարկվում է կատարել ներդաշնակեցում և/կամ ունիֆիկացիա (էջ 14, 68-78):

Կարծում ենք, որ նշված կետի դրույթը առավել հիմնավորված կլիներ եթե հեղինակը անդրադարձ կատարեր նաև դատական պրակտիկային և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Անձնական տվյալների պաշտպանության գործակալույթան գործունեությանը:

4. Ատենախոսության որոշ էջերում առկա են ոչ ճիշտ ձևակերպումներ և օտար լեզվով ներկայացված արտահայտություններ՝ առանց բացահայտելու դրանց հայերեն բովանդակությունը, մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ «սուիդարության իրավունքներ» (էջ 61, 135), «sui generis» (էջ 13, 61) եզրույթների: Միաժամանակ, աշխատանքում առկա են որոշակի լեզվաոճական թերություններ:

Եզրակացություն

Նշված դիտողություններն, ըստ էության, մասնակի բնույթ են կրում և բնավ չեն նսեմացնում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսության դրույթները:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները տեղ են գտել հեղինակի գիտական հրատարակումներում:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ գրախոսման ներկայացված ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտական և գիտական արժեք ներկայացնող աշխատանք է, ինչը հիմք է

տալիս եզրակացնելու, որ **Լուսինե Սիմոնի Մինասյանի «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ., դոցենտ՝ Ն.Տոնոյան

ԵՀ Իրավագիտության ամբիոնի դասախոս՝ ի.գ.թ Վ.Պողոսյան

Ն. Տոնոյանի և Վ. Պողոսյանի ստորագրությունները

հաստատում եմ՝ ԵՀ Գիտական խորհրդի քարտուղար ի.գ.թ Վ.Թորոսյան

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
"ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ"
"EUROPEAN UNIVERSITY"
00436097